ԱՐՑԱԽՅԱՆ ՕՐԱԳԻՐ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Արցախյան շարժումը սկիզբ դրեց ազգային ինքնագիտակցության զարթոնքին ու վերելքին: Այն արթնացրեց մեզ, ազատագրեց ապազգային գաղափարախոսության ճիրաններից, և մենք զգացինք, ճանաչեցինք մեզ, մեր տեղը, մեր գործը:

Ազգային-ազատագրական շարժումն առաջինը ոտքի հանեց հայ երիտասարդությանը, որը առաջին իսկ օրվանից ոլայքարի է ելել Արցախը մայր Հայաստանին միացնելու ազնիվ մղումով: Այդ պայքարում իրենց ուրույն տեղն ունեն նաև Երևանի ժողտնտեսության ինստիտուտի մի խումբ երիտասարդներ, որոնք, ընդգրկվելով «Նժդեհ» ուսանողական շինարարական ջոկատի մեջ, այս տարվա հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին գտնվում էին ԼՂԻՄ-ի Հադրութի շրջանում՝ օգնություն ցույց տալու առաքելությամբ:

Երևանից ջոկատը մեկնեց հոկտեմբերի 10-ին: Ուղղաթիռը վայրէջք կատարեց Հադրութի շրջանի Դոլանլար գյուղում: Մեզ դիմավորեցին տեղացիները երջանկության, ուրախության արցունքն աչքերին: Այդ պահին մենք, ըստ էության, իրականացրինք մեզ համար այնքա՜ն բաղձալի միացումը: Այնուհետև տեղափոխվեցինք Խծաբերդ գյուղ, որն ավտոմոբիլային ճանապարհով (եթե կարելի է դա ճանապարհ կոչել) ընդամենը 26 կմ-ի վրա էր գտնվում Գորիսի շրջանի Կոռնիձոր գյուղից:

Կնքված պայմանագրերի համաձայն, «Նժդեհ» ջոկատը շինարարական ու գյուղատնտեսական աշխատանքներ պետք է կատարեր Խծաբերդ և նրա հարակից Քարինգ (Արփագյադուկ), Սպիտակաշեն, Պետրոսաշեն և Ծաղկեձոր գյուղերում: Ջոկատը բաժանեցինք առանձին խմբերի, տասնապետներ կարգեցինք ու անցանք գործի: Ընդհանուր առմամբ, կատարեցինք 15 հազար ռուբլու շինմոնտաժային ու գյուղատնտեսական աշխատանքներ: Անում էինք ամեն ինչ՝ և՛ դպրոցի շենքի, հասարակական ու անհատական տների կառուցում ու նորոգում, և՛ էլեկտրիֆիկացման աշխատանքներ, և՛ անտառահատում, և՛ հողագործական ու անասնապահական աշխատանքներ: Աշխատում էինք ցանկացած եղանակին, սնվում գյուղացիների տանը: Բոլորն էլ հարազատի, ծնողի պես էին մեզ վերաբերվում:

Ինստիտուտի ուսանողության և ողջ կոլեկտիվի կողմից հանգանակված գումարով գնել էինք ալյուր, շաքար, շաքարավազ, պահածոներ և այլն: Այդ ամենը բաժանեցինք ըստ շնչերի: Հիմնական մթերքներից շատ ծանր էր ալյուրի և շաքարի հարցը: Ժամանակ էր լինում, որ ուտելու հաց չէր լինում, քանի որ ալյուր չկար: Սակայն մեր ներկայությունը, մեր ամեն նոր սարքած տուն թարմ լիցք էին հաղորդում մարդկանց, էլ ավելի ամուր միացնում մեզ իրար և մոտեցնում ընդհանուր վերամիավորման պահը:

Այդ գյուղերը գտնվում են ադրբեջանական գյուղերի ու Ադրբեջանի ժողովրդական ճակատի ջոկատների շրջափակման մեջ: Ամեն օր մութն ընկնելուց հետո հերթապահություն էինք սահմանում գյուղերում, հսկում դրանք ադրբեջանցիների հարձակումներից, որոնք լինում էին համարյա ամեն օր: Գալիս էին 40—50 հոգով, շրջապատում գյուղը, սպառնում, հայհոյում, վերջնագիր ներկայացնում գյուղը լքելու պահանջով, տալիս 3 օր ժամանակ, կրակ բաց անում մեր, բնակիչների վրա: Հաճախակի էին լինում ընդհարումները: Մեր ջոկատից երկու տղաներ ադրբեջանցիների մի հարձակման ժամանակ վիրավորվեցին: Տասն օր հետո նրանք նորից պաշտպանում էին հայկական օջախների անվտանգությունը, սակայն ստացած վերքերի ցավն ու ապիներն ընդմիշտ կմնան նրանց մարմինների ու հիշողության մեջ:

Պայմանագրային պարտականությունների կատարումից հետո հանդիպեցինք Հադրութի շրջանի ղեկավարության հետ: Գործնական զրույցի ժամանակ մեր ինստիտուտի ուսանողներին խնդրեցին վերցնել Թեսխարաբ լքված գյուղի շեֆությունը և զբաղվել դրա վերակենդանացմամբ: Նրանք խոստացան մեզ տրամադրել շինանյութ՝ շինարարական աշխատանքների կատարման համար:

Եկավ վերադարձի օրը: Գոհ էինք, որ Երևան ենք վերադառնում ողջ ու առողջ: Ըստ պայմանավորվածության, առաջին կիսամյակի քննությունները հանձնելուց հետո, նորից պիտի վերադառնանք Հադրութ:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
շինջոկատի հրամանատար